# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 04 >> հոկտեմբերի 2012 թվական N 144 քաղաք Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ 728 հրամանագրի 1.18-րդ կետի «ա» ենթակետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի «Անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1202-Ա որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների իրականացման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝
ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 1202-Ա որոշման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԳԻՔԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի
հոկտեմբերի 04-ի թիվ 144 կարգադրության

# Կ Ա Զ Մ
# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԸ (ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԸ) ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Աշոտ Գիժիրյան - ՀՀ Շիրակի մարզպետ, խմբի ղեկավար,

Սեյրան Պետրոսյան - ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, անդամ,

Կառլեն Աբրահամյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, անդամ,

Հովհաննես Մամիկոնյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, անդամ,

Գևորգ Ղումաշյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ, անդամ,

Հայկուշ Ավետիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, անդամ,

Դանիել Վարդանյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,

Զորիկ Խաչատրյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,

Արա Մովսիսյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչության Շիրակի մարզի տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ, անդամ,

Անահիտ Առաքելյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրիի տարածքային հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ, անդամ,

Արթուր Ալեքսանյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության հարկային քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ, անդամ,

Սամվել Ասատրյան - Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ — Խ. ՊՈՂՈՍՅԱՆ